

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԱՍՈՐԻՔԻ ԵՒ ՊԱԼԵՍՏԻՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ՈՒ ԿՐՑՆՆԵՐԸ

Ասորիքի և Պալեստինի «արար» կոչուած ժողովուրդը արժանի է այդ անուան միմիայն իւր բարբառով, նա սերուած է երկրի նախկին բնակիչներից: Արաբիայից եկող տիրապետները ամենեւին չ'ընջեցին բնիկներին, այլ անձեռնմխելի թողին նրանց դաշտերն ու տները՝ պահանջելով միմիայն հարկ. մինչև անգամ չստիպեցին նրանց իսլամութիւնն ընդունել: Ասորիների մեծամասնութիւնը շաապեցին մահմէտական դառնալ, ինչպէս որ առաջ էլ՝ Բիւզանդական տիրապետութեան տակ՝ քրիստոնեայ էին դարձել: Բայց ինչպէս մի քանի դար առաջ կռապաշտութեան փոխարինող քրիստոնէութիւնը, այսպէս և՛ մահմէտականութիւնը խոր արմատներ չձգեցին: Նախ և առաջ խնդիրը հողը պահպանելու մըն էր, իսկ նոր կրօնի արտաբին ձևերը շատ քիչ նեղւթիւն էին պատճառում Ֆէլլահին, քանի որ նախնական՝ նոյն իսկ յուդայականութիւնից առաջ եղող՝ կրօնների հիմունքը մշտապէս մնացել են Ֆէլլահի սրտում անկապտելի: Նման այն ժամանակներից, երբ երբբայական մարգարէները թափում էին իրենց անէծքները բարձր տեղերի—«Բարձունքների» երկրպագուների վրայ, մինչև այսօր էլ նրանց պաշտելի առարկաները ֆէտիշներ են՝ մեծ ծառեր և ժայռերի շեղջակոյտներ: Սակայն նրանք ստիպուել են ծալտել կռապաշտական պաշտամունքը խիստ մոլսուլման ձևերի տակ: Սրբափայրերը, որ կոչւում են «Լսյան» կամ «Տառ» — գրեթէ միւնոյն «Տառ» որ անիծուած էր Մովսիսական օրէնքով,— զարգարուած են փոքրիկ, սպիտակ գմբէթներով, որոնց տակը՝

նրանց ասելով՝ ամիսփուլում են առաջնորդների և մարգարէների շիրիմները: Բայց այս շէյխ ու նէբի'ները ուրիշ բան չեն, եթէ ոչ նախկին տեղական աստուածութիւնները, թէև շատերը ստացել են նոր՝ մինչև իսկ քրիստոնէական՝ անուններ, ինչպէս՝ Պօղոս, Պետրոս, Մատթէոս: Այս ենթադրեալ մուսուլման սրբերը յաճախակի ընկերացած են զոյգ զոյգ, ինչպէս որ Փիւնիկեցիների աստուածներն էին, որոնց նոր կրօնական միջավայրին յարմարեցնելու համար բաւական է եղել կին ամուսիններին քոյր անուանել: Պաշտամունքի ծէսերը նոյնն են, ինչ որ երեք հազար տարի առաջ. մինչև այսօր էլ գառներ են մորթուում մատուռների դիմաց, սուրբ վէմը կամ դամբարանի մուտքի դրան վերին քարը նմանապէս ներկուած է լինում հինայով: Գիւղի ծերերը հանգիստը սպար են բռնում «կայանի» առաջ, պաստառի կտորներ ուխտագրութեամբ փաթաթուում են մացառներին: Արբի գլխի վերևը բարձրացող սրբաղան ծառից ընկած ամեն մի ծիւղ ժողովում է ինչպէս թանգազին իր, մաքամների մէջ լապտերներ են վառում և բոլոր շրջակայ բլուրների ծայրին, որտեղից սուրբն երևում է, փռքրիկ ըրգաձև նշաններ են տնկուած: Արբաւայրի պարօպապատի մէջ ասպնջականութիւնը անբռնաբարելի է մինչև անգամ՝ անհաւատների համար: Տեղական աստուածութեան անունը երբեք այնպիսի թեթեւութեամբ չէ արտասանում, ինչպէս որ Ալլահի անունը: Այ՛ մի բան այնպէս հազուադէպ չէ ինչպէս տեղական սրբարանի վերայ դրուած սուտ երգումը¹⁾ այգպիսի յանցանքի անխուսափելի հետեանքն է լինում մահ—սպանութիւն:

Քանանական նախկին կրօններն էլ կանգնեցնում էին դոլմէնների, մենհիրներ և քարի շրջաններ: Յուդայի երկրում դրանցից չեն գտնւում այլ ևս, որովհետև Մոսիսիսական օրէնքի խստապահ հետևողները կործանել են դրանց մոռանալով որ՝ թէ Մովսէսը և թէ Յեսուն էլ կանգնեցրին այգպիսի արձաններ: Սա-

1) Clermont Gonneau, Palestine inconnue;—Conder, Tent—work in Palestine.

մարիայում կարծում են գտած լինել այս նախնական յիշատակարաններից մէկի հետքերը: Անգլիացի հետախոյզներ նշմարել են դրանցից մի քանիսը Գալիլիայում՝ «կռապաշանների երկրում»: Մի ուրիշը երևում է Տիւրոսի մօտ, իսկ հարիւրներով գտնուել են Անդր - Յորդանանի լեռներում ¹⁾ և Սինայեան թերակղզում: Միմիայն 1881 թուին դրանցից գտնուեցին եօթն հարիւրից աւելի Մոլարի երկրում: Իւրաքանչիւր բլրի գլուխ ունէր եթէ ոչ իւր տաճարը գտնէ իւր քարերի շեղջը: Յիշատակարանների մեծ մասը կազմուած են անտաշ քարից, թէև կան և այնպիսիները որոնց երկաթ դիպել է: Արաքները մինչև այսօր էլ Գովմենները համարում են իբրև սեղան և գալիս են այգտեղից ողջունելու արեգակի ծագումը: Այս մեծաքարերի (մեգալիթ) շուրջը գրտնուել են նետերի շատ սլաքներ և բազմաթիւ բանուած — սրուած գոյլախաղ ²⁾:

Պալեստինի և Անդր - Յորդանանի բնակիչները Փոքր Ասիայի բնակիչների նման բազկացած են երկու բոլորովին տարբեր՝ թէև գրեթէ ամբողջ երկրում միմեանց կողք կողքի ապրող՝ տարբերից: Իրանք են՝ թափառաշրջիկ բէգուիւնները և գիւղերում ու քաղաքների արուարձաններում բնակուող ֆէլահները: Մի քանի քաղաքներում, որոնք աւելի բազարների և պարտէզների խմբեր են քան քաղաքներ, ինչպէս է օրինակ՝ Գազան, կողք կողքի են գտնուում քաղաքացու տունը, ֆէլահի հիւզը և արարի վրտնը: Այս - Յորդանանում բէգուիւնները պակասում են, հազիւ թէ նրանցից մի քանիսին հանդիպի մարդ Սարոնի կողմնական հովտում՝ Կարմելի և Եսֆիայի միջև, բայց շատ չէ անցած այն ժամանակներից, երբ աւազակներն անցնում էին Յորդանանը Լսգրէլոնի հովտի գիւղերը աւարելու համար: Անդր - Յորդանանի բարձրաւանդակների վրայ բեգուին գլխաւոր ցեղերն են՝ Ագուանները, մօտ 11000 հոգի և Բենի - Սախր կամ «ժայռերի որդիքը», առաջիններից մի երրորդով նուազ, բայց աւելի հզօր: Արանք ի-

1) Gonder, Exploration of Palestine;—Wilson;—Holland, etc.

2) E. Cartailhac, L'age de la pierre en Asie.

րենց համարում են կետրոնական Արաբիայից գաղթած և ցեղակից Հիմիարներին, որոնց մի քանի բառերը պահպանել են իրենց բարբառում: 1) Սինայեան թերակղզու բեդուինները, որ կոչւում են Տուֆարահ կամ «Տորի Արաբներ» ընդհանուր անունով, իրենց թիւն հաշւում են թերեւս փոքր ինչ չափազանցութեամբ՝ 8000: Արանց համարում են այն Ամազէկացիներից սերուած, որոնց Եգիպտոսից ելած հրէաները յաղթեցին Ռափիդիմ'ում: Սերբալ սարի ստորոտում: Տուֆարահները ամուր կապուած են իրենց ծըննդաւայրին և միշտ միեւնոյն ձմերանոցներում ու ամարանոցներում են բնակւում: Նրանց կանայքը Աղուանների կանանց նման ստորին շրթունքները ներկում են կապոյտ գոյնով և դէմքերի վերայ նկարում են մի քանի երկրաչափական ձևեր²⁾: Նլիսէ և ի ասելով բեդուին ցեղերը շատ զանազան ծագումն ունին, կան որ հիւսիսային եւրոպացիներին են նմանում իրենց խարտեաշ մազերովը և կապոյտ աչքերովը: Պալեստինի բեդուինների մէջ հանդիպում են Ալթերցիներ՝ փախած արեւելք Վրանսիական տիրապետութիւնից խոյս տալու համար, սակայն իրենք իրենց համարում են գրեթէ հայրենակից ճանապարհորդող Վրանսիացիներին, որոնց և ներկայացնում են իբրեւ իրաւունք ունեցող նրանց ողորմութեանը³⁾: Բեդուինների մէջ թափառում են նաև Նաուրի կոչուած բոշաներ:

Պալեստինի ֆէլլահները, որ ընդհանրապէս կոչւում են +ս-ֆալ կամ «շինական» արաբներից արհամարհուած են իրենց աղջատ բարբառի և մանաւանդ ստրկական բնաւորութեան պատճառով:

Ֆէլլահների այդ բնաւորութիւնը իրենց վարած կեանքի անխուսափելի հետեւանքն է: Այս երկու խումբ ժողովրդի մանկամարդների մէջ հազիւ է պատահում խնամութիւն: Սակայն ֆէլլահների մեծամասնութիւնը բարեկազմ են և դուրեկան դէմքով: Նազարէթի և Բէթլէհեմի կանայք հռչակաւոր են գեղեցկու-

1) Conder, Heth and Moab.

2) Palmer, The Desert of the Exodus.

3) Lortet, La Syrie d'aujourd'hui.

թեամբ, որ և բացատրւում է՝ սխալ թէ ուղիղ, եւրոպական տար-
րի հետ արեւնախառնութեամբ: Ասորիքի և Պալեստինի գիւղե-
րում շատ հազիւ են պատահում տձև, խեղ անձինք, բայց ուր-
կութիւնը մինչև այժմն էլ տարածուած է ֆէլլահների մէջ և
իւրաքանչիւր մեծ քաղաք իւր արուարձանն ունի այդ սարսափե-
լի հիւանդութիւնից կերուած թշուառականների համար: Պալես-
տինի մի քանի կողմերում պոռնիկ կանայք քարկոծւում են՝ ինչ-
պէս երկու հազար տարի առաջ, և ցոյց են տրւում այն վիհերը,
ուր դեռ նոր ժամանակներում նետուել են այդ դժբաղդները
գիւղի ծերերից ¹⁾:

Գիւղերի բնակիչները շատ չեն փոխուել, բայց քաղաքներինը
շատ շատ: Յաղթական արաբները, յետոյ թուրք անուանուած-
ները, որ իսկապէս քրդեր են, հայեր և չէրքէզներ հաստատուել—
բնակուել են քաղաքներում: Սարկութիւնը վերացուած չէ: Դա-
մասկոսը միշտ ունեցել է և ունի իւր վաճառանոցները, ուր ափ-
րիկեցիներ են ծախսում, և այս բոլորը նպաստում է բնակչու-
թեան արեւնախառնութեան: Այս երկրի ժողովուրդը՝ թէև ցե-
ղով շատ խառնուած, ունի սակայն իւր յատուկ գծագրութիւնը:
Ասորիները սովորաբար ունին՝ կանոնաւոր, թէև փոքր ինչ լայն
կերպարանք, լաւ գծուած քիթ՝ թէև առանց նրբութեան թե-
թեակի դուրս ցցուած շրթունքների, նշաձև աչքեր, որ միշտ
գեղեցիկ են, և չափազանց շարժուն դէմք: Բոլոր ճանապարհորդ-
ները միաբան վկայում են, որ ասորիները իսկապէս արժանի ժա-
ռանգ են իրենց նախնիներին՝ փիւնիկեցիներին և ամեն բանում
ընդունակ ժողովուրդ են: Բիւրոսն՝ ասում է, որ նրանք «աշխար-
հի ամենալաւ օժտուած ցեղն են»: Չնայած կրած սորկութեան
երկար դարերին, նրանք հիանալի նախաձեռնութիւն ունին և
միանգամայն չափազանց դիւրին ըմբռնողութիւն: Նրանց ընդու-
նակութիւնները բնականաբար հակուած են դէպի վաճառակա-
նութիւնը և արդէն բազմաթիւ ասորի վաճառականներ հաստա-
տուած են Մարսէյում, Նիւրպուլում, Մանչեստրում, մինչև ան-

1) Gonder, Tent—work in Palestine.

գամ՝ Ամերիկայում և Սկանդինավիայում: Ի ծնէ՝ վաճառական՝ նրանց խօսակցութիւնը մշտապէս փողի վրայ է: Բացի այս՝ Ասորիքի արաբներին՝ մեղադրում են ճշմարտախօսութեան համար քիչ հոգածութիւն ունենալում: «Սուտը մարդու աղն է» ասում է նրանց մի առածը, 1) արդարացնելով խաբէրայութեան մոլութիւնը, որ այնչափ սովորական է հալածուած ընկճուած մարդկանց: Ասորիների մի ուրիշ գլխաւոր պակասութիւնն է նրանց անտանելի սնապարծութիւնը: Նրանք շատ շուտով գոռոզանում են իրենց գիտութեամբ, այնպէս որ՝ ցանկութիւն չեն ունենում աւելի սովորելու: Նրանք կանգ են առնում հպարտացած, որ արդէն շատ հեռու են գնացել: Այս էլ կայ, որ իւրաքանչիւր քաղաք իւր բնորոշ առանձնայատկութիւններն ունի, որ ծագում է միջավայրի և խառնուրդի զանազանութիւնից: Տեղական ասացուածները նկարագրում են այս տարբերութիւնները չափազանց չափազանցօրէն. «Հալէլէ!», «Զէլէլէ! Շաֆ, Շաֆ»:

Հալէբցի — աղափարի, Շամցի — շնափարի: Այսպէս են միմեանց պատում այլ և այլ քաղաքների բնակիչները: Գոմասկոսի (Շամի) բնակիչները Ասորիքի *աֆէն, աֆէնէն* են, որ և բացատրում է նրանց մշտական յարաբերութեամբ Սեկքայի հետ: Արաբական բարբառը այստեղում աւելի մաքուր է քան թէ մնացած Ասորիքում, բայց հին ասորերէնը (սիրիաք) պահպանուել է հարեան մի քանի գիւղաքաղաքներում: Հալէբը թրքախօս երկրին մօտիկ է, իսկ Անտիոքը արդէն փոքր Ասիային է վերաբերում իւր լեզուախօսութեամբ:

Ասորիքի հիւսիսային ծովազրի երկարութեամբ՝ Ալեքսանդրեական (Հայոց ծոց) ծոցից մինչև Նահր էլ կեքիւր, լեռնաբլուրների մեծ մասը սլաականում է Նոսայիքի (Փոքր Քրիստոնիայ 2) կամ Անսարի ժողովրդին, որ համարւում է 120 000 մինչև 180 000 հոգի: Սրանք լեռներում հովիւներ են, գաշտաւայրում՝ սլաական հոգագործ, բայց արձակ գիւղերում ապրողները իրենց

1) Conder Tenk—work in Palestine.

2) Ernest Renan, Mission de Phénicie.

հետեւ են պահում գրացիներից և բնաւ չեն խնամենում նորանց հետ, թէև խօսում են արաբերէն: Արանց մէջ բուսական շատ կան խարտեաշ մազերով և կապոյտ աչքերով մարդիկ ¹⁾: Քաղաքացի անսարիները իրենց մահմետական են անուանում, որ զերծ մնան հալածանքից, թլփատում են մանուկներին և կատարում են արտաքին ցոյցերով պաշտօնական կրօնի ծէսերը, բոլոր պատուիրուած լուացումները և պահում են ծոմերը: Բայց ունին առանձին կրօնք, սաբէականութեան և քրիստոնէութեան մի խառնուրդ, որով կապակցւում են Մանիքեցիների հետ: Նրանց կրօնի հիմնական գաղտնիքը, որ բերանացի աւանդւում է աշակերտողներին, կոչւում է «Երկուսի խորհուրդ» ²⁾: Այս էլ կայ՝ որ զանազան ցեղերի կամ «շաւիշեի» դաւանութիւնը ճշտութեամբ մի և նոյնը չէ և ճանապարհորդ գրողների պատմածները շատ են տարբերւում միմեանցից, նայելով թէ ով ինչ անսարինների խմբի հետ յարաբերութիւն է ունեցել: Ասում են որ մեծամասնութիւնը պաշտում են մի աստուած հինգ անձնաւորութեամբ, երկրպագութիւն են անում ծառերին և մանաւանդ արեւին և լուսնին, որ «մեղուների» կամ աստղերի երկու «իշխանն» են: Նրանց աչքում կին մարդը չափազանց պիղծ արարած է: «Աստուած» ասում են նրանք, ստեղծեց սատանաներին մարդու մեղքերից, իսկ կնոջը՝ սատանաների մեղքերից: Կին մարդը՝ որ աւելի վատթար է դեւից՝ չունի իրաւունք մինչև իսկ աղօթելու: Այս էլ պէտք է ասած՝ որ Ասորիքի միւս բնակիչներից էլ կինարմատը այնչափ քիչ է ակնածուած, որ վայելուչ է համարւում ներողութիւն խնդրել նախապէս, երբ մարդ ստիպուած է այդ անմաքուր արարածներից մէկի անունը յիշել: Փաթաթանով մանուկների գլուխը տձեացնելու սովորութիւնը հասարակաց է անսարինների մօտ ³⁾:

1) Blanche;—Conder, Heth and Moab.

2) Victor Langlois, La Cilicie.

3) Ernest Chantre, Rapport sur und Mission scient, fi-
que dons l'Asie occidentale.

Գրուղները, որոնց թիւը կարծւում է լինել 80000 - ից մինչև 130000, բնակւում են հարաւային Լիբանանի (Լիբան) հովիտներում և Հերմոնի վրայ: Նրանք իրենց ժայռերի բերդերի ստորոտում՝ դաշտավայրում՝ խառնւում են ուրիշ հաւաքակութեանց հետ: Գրուղ ժողովուրդը աստիճանաբար տեղափոխւում է գէպի արևելք: Լիբանանի շատ գաւառներում, ուր նրանք երբեմն շատ և բազմաթիւ էին, այժմ երևում են կըղզիացած ընտանիքներ միայն, մինչդեռ Զէբէլ - Հաուռան՝ը կամաց կամաց լցւում է նրանցով, որ հասել են արգէն տափաստանների սահմանին, ուր և դաշնակցել են Անադէների և Շամմարների հետ ¹⁾: Հարիւր յիսուն տարի առաջ այս հրաբխային բարձրութիւնը միմիայն բեզուխներին ապաստանատեղի էր, մինչդեռ այժմ՝ մեծ մասամբ բնակուած է գրուղներով: Այս մեկուսացած երկրում սէգ լեռնականները, անուամբ և եթ հպատակ թուրքիային, վերստին ձեռք են բերում իրենց համար սոյնչափ թանկագին անկախութիւնը: Նրանք ունին այստեղում արօտներ, բերրի վարելահող, առատ ջուր, առողջարար օդ և նախկին լքուած քաղաքները տալիս են նրանց առատաբար տնակներ շինելու հարկաւոր քարը: Անսարիների նման անուանւում են մուսուլման, բայց միւս մահմետականները իրաւամբ նրանց դուրս ձգուած են համարում Խալամից, որովհետև նրանց կրօնական վարդապետութիւնները բնաւ չեն համաձայնում Ղուրանի հետ: Էգ - Գրուղները կամ Մոհամմէգ Էգ - Գերաղի մարգարէի աղանդաւորները գաւառւում են մի կրօն, որը մեծամասնութիւնը չէ կարող մինչև իսկ ուսումնասիրել, այնչափ բարդ է նրա աստուածաբանութիւնը, այնչափ նրա հիմնադիրները՝ վարժ բնազանցական նրբութիւններին՝ խառնել են իրենց շիա՛կան վարդապետութիւնները Գնոստիկեան և Մազդեզական յիշողութիւններով: Մի Պարսիկ մոգ հիմնեց այս աղանդը հիջրէթի երրորդ դարի վերջերում: Մի ուրիշ իրանցի մոգ՝ Համզա՛ն ամիրովեց և փոփոխեց վարդապետութեան գլխաւոր մասը: Գրուղները իրենք

1) Conder, fortnightly Reviewe, aug. 1863.

իրենց անուանում են «Միասնական» և նրանց առաջին հաւատալիքը իսկապէս աստուծու միութիւնն է, բայց այս աստուածը բազմիցս յայտնուել է մարդկային կերպարանքով: Ալին նրա մարմնառութիւններից մինն էր, ինչպէս և սոսկալի խալիֆ Հաքիմը, որի կատարութիւնը և անգթութիւնը առակ են դարձել մուսուլմանների մէջ: Համզան «շրջանի կեդրոնն» է և վերջինը աստուածային մարմնառութիւններից, նա լոյսն էր, իսկ Մահմէդը խաւարը: Չարի ամեն մի աշակերտի հակառակ ծնուեց մի բարու աշակերտ: Երկու սկզբունքի միջև կռիւը յարատեւ է, պատերազմն անլերջ, որի մէջ Գրուզները և հեռաւոր Չինաստանի խորքերում «Գոգ ու Մագոգի» անհամար ամբոխը ներկայացնում են Աստուծոյ բանակը: Հոգիների թիւը նախայաւիտեան ժամանակից որոշուած լինելով, նրանք անցնում են անընդհատաբար մարմնից մարմին, վերասկսելով պատերազմը ամեն մի նոր գոյացութեամբ: Հոգին հեղուկի է նման, որ մի ամանից լցւում է միւսի մէջ»: Նրա վիճակը որոշուած է նախապէս և ընտրեալների գաշնագրութիւնը Աստուծոյ հետ գրուած է եգիպտոսի բուրգերից մինում: Վերջին օրը Հաքիմը իւր սուրը յանձնելու է Համզային, որ նա յաղթանակը տայ ճշմարիտ կրօնին և բաժանէ պատիժներն ու վարձատրութիւնները: Վարդապետութեան մեծ մասը ներքին է և պարածածկեալ (էգօտերիք), քօղարկուած տգէտների համար բանաձևերով, նշաններով և թուերով, որոնց բանալին յայտնի է միմիայն ընտրեալներին՝ ներընծայուածներին (initiés) կամ «իլլաւնէրէն»: Մահուան պատիժ է նշանակուած նրան, ով որ երեւան կհանէ այն խորհրդաւոր ծիսակատարութիւնները, որ կատարւում են «բարձունքների» վրայ մի սրբազան հորթի առաջ:

Գրուզներին գրուած բարոյականութեան առաջին խրատներն են ճշմարտասիրութիւն և համերաշխութիւն: Նրանք պարտական են վերաբերուել միմեանց անկեղծութեամբ և բարեացակամութեամբ: Դէպի օտարականները չունին նրանք միևնոյն պարտականութիւնը՝ կարող են մինչև անգամ օտարականին սպանել առանց յանցանք գործած լինելու, եթէ այդ մահը անհրաժեշտ է աղգային գործի

Համար: Սակայն նրանք ջոկուում են իրենց բոլոր հարեան ազգերից աւելի մեծ շխտակութեամբ, աւելի մեծ արժանապատուութեամբ իրենց վարք ու բարքում, աւելի տւական բարեկամութեամբ, աւելի անսեթեւեթ խօսակցութեամբ: Նրանք ընդհանրապէս շատ սակաւապետ են, ճաշակով հագնուած, բայց առանց ցուցամոլութեան, զգուշաւոր խօսակցութեան մէջ և միմեանց տալիս են ակնածաբար շէյխ տիտղոսը: Նրանք պարտականութիւն են համարում մարդկանցից ամենալաւը լինել, որովհետեւ ընտրեալներ են: Ոչ մի տեղ Արեւելքում կանայք այնչափ չեն յարգուած որչափ այս տեղում: Նրանց իրաւունքները ամուսնութեան մէջ և իբրեւ սեպհականատէր՝ հաւասար են այր մարդկանց իրաւունքներին: Իսկ կրթութեամբ նրանք ընդհանրապէս աւելի բարձր են այր մարդկանցից, որովհետեւ գրեթէ ամենքն էլ գիտեն գոնէ կարգալ-գրել և «գիտնականների» կամ ներընծայուածների դասակարգին են պատկանում: Ընտանիքները առանց բացառութեան միակին են, մանուկների թիւն էլ սահմանափակուած է: Սովորութիւնը չէ տալիս փարթամ մարդուն չորս աղջկանից աւելի ունենալ, աղքատին՝ երկուսից աւելի: Պէտք չէ որ ընտանեկան հոգսերը արգելեն կին մարդուն զբաղուել իւր քաղաքացիական պարտականութիւններով և ազօթքներով: Դրուզների քաղաքական ազդեցութիւնը անցնում է իրենց ցեղի սահմաններից՝ աւելի հեռուն տարածուելով: Այս «Միաստուածեանների» էմիրները իրենց հպատակների թւումն ունին նաև զանազան ազանդի գիւղացիներ, որոնց հետ սակայն քաղցրութեամբ են վարւում: Դրուզները շատ քաջ են և չկայ թշնամի՝ հաւասար թւով՝ որին յաղթելուն առաջուց հաւատարի չլինեն 1):

Ասորիքի ոչ քրիստոնեայ աղանդների մէջ Մետուալիները, որ բնակւում են Տիւրոսում, Սիդոնում, Կեօլէ - Ասորիքի դաշ-

1) Silvestre de Secy, Exposé de la religion des Druses;—Guys, La nation druse, son histoire, sa religion;—H. Petermann, Reisen in Orient;—Wolff, Die Drusen und ihre Vorläufer.

տում և շրջակայ հովիտներում՝ մի առանձին տեղ են բռնում իրենց անհամբերողութեամբ։ Սրանք շիա'ներ են և իրանցի մուսուլմանների նման մի առանձին յարգանք ունին դէպի Ալի խալիֆը, որին դասում են Մարգարէին հաւասար և կամ դեռ նրանից էլ բարձր և ուր որ գնան տանում են իրենց հետ մի քիչ պարսկական հող ¹⁾։ Սրանք իրենց պղծուած կհամարեն եթէ հերետիկոսի՝ սիւննու կամ քրիստոնէի կալին և կօտրում են օտարականից գործածուած ամանը։ Աւելի հիւսիսում՝ չուսը Տրիպոլի'ից անջատող լեռներում՝ մի ուրիշ աղանդ— Բաթենացիների կամ Իսմայիլացիներինը պահպանել է Հաշիշիմների կամ Հասասների, այն է՝ Էլբուրդի կեդրոնում իւր Ալամուտ ամրոցում գահակալող Վերան ծերի՝ Սէիդների աւանդութիւնները։ Ասորիքի լեռները, ինչպէս նաև Քուրդիստանի և Հայաստանիները, ապաստանի տեղ են եղել հալածուած կրօնների համար։ Դաշտավայրի և բարձրաւանդակութեան հարթհաւասար տարածութեանց վրայ հաւատի միութիւնն է թագաւորում մինչդեռ լեռնային գաւառներում մակերևոյթի անհաւասարութիւնը պաշտպանել է կրօնների այլազանութիւնը։

Մարոնի'ները, որ այժմն յարած են լատին եկեղեցուն՝ չնայած իրենց ծէսերի և հաւատալեաց սկզբնական տարբերութեանցը, այն քրիստոնեաներիցն են, որոնք զերծ են մնացել ջնջուելուց լեռների գահավէժների շնորհիւ։ Ամրապինգ խմբուած իբրև մի ազգային մարմին՝ նրանք բնակւում են գլխաւորապէս Վիբանանի արևմտեան կողերի վրայ, Նահր-էլ Կելբ կամ «Շան գետի»՝ որ թափւում է ծովը Բէյրութից փոքր ինչ հիւսիսում, և Նահր-էլ-Քարիզ կամ «Սառն գետի» միջև։ Այս վերջինը հօսում է Վիբանանի հիւսիսային հանդիպագօտիներից։ Մարոնի'ների մի քանի խումբ բնակւում են նաև Անտարիների երկրում և դաշտի քաղաքներում, ուր յենւում են կաթոլիկ հասարակութեանց վրայ։ Վերջապէս՝ Կիպրոս կղզում դեռ մնացել է նրանց նախկին գաղութի տակաւնը։ Մարոնիները իրենց անունն

1) Conder, fortnightly Reviewe, aog. 1883.

ստացել են Մարոն պատրիարքից, որ կազմակերպեց նրանց եկեղեցին եօթներորդ դարում: Մարոնիները խաչակիրների ժամանակ Արևմուտյիների բնական դաշնակիցներն էին ընդդէմ մահմէդականների և կամաց կամաց փոփոխեցին իրենց վարդապետութիւնը՝ Արևմուտյիների վարդապետութեան հետ համաձայնեցնելու համար: Արևմուտյիներին ընկերակցում էին նրանք պատերազմների գաշտերում: 1215-ին ընդունեցին պապի հեղինակութիւնը և այդ ժամանակից ի վեր համարւում են Արևմուտքի կաթոլիկների առանձնապէս պաշտպանեալները: Լեռնացի մի քանի ընտանիք եւրոպական անուններ են կրում, որ թոյլ է տալիս կարծելու թէ խաչակիրների ժամանակուայ Ֆրանկները խառնուել են Լիբանանի ժողովուրդներին հետ ¹⁾: Մարոնիները հպարտութեամբ ցոյց են տալիս Լուզովիկոս ԺԳ-ի և Լուզովիկոս ԺԵ-ի երկու նամակը, որով խոստացւում է նրանց Ֆրանսիայի յարատե օգնակաութիւնը, և այս դարի ընթացքում նրանք նկատուած են եղել մշտապէս իբրեւ Լիբանանի փրանսիացիների: Այստեղից ծագեց այն մեծ կարեւորութիւնը, որ ստացաւ Մարոնական խնդիրը դիւանագիտական ազդեցութեանց պայքարում Արեւելքում: Դաշնագիրների զօրութեամբ Լիբանանի փաշան պէտք է դաւանէ քրիստոնէական՝ այն է՝ լեռնացիների մեծամասնութեան կրօնը: Արտիհետեւ Ֆրանսիան պաշտպանում է Մարոնիներին՝ Մեծ Բրիտանիան էլ իւր հովանաւորութեան տակ առաւ Գրուզներին, որով տեղական անհամաձայնութիւնները՝ բորբոքուած օտարական պատուիրակներից և նոյն իսկ մուսուլման փաշաներից, որոնք ուրախ են բաժանել որ տիրեն՝ փոխուեցան բացարձակ կռուի և կոտորածների: 1860-ին տասներեք հազար քրիստոնեայ մորթուեցան Լիբանանում և հարեան երկիրներում: Գրուզներին մեղադրեցին իբրեւ հեղինակ այս մեծամեծ արենհեղութեանց, բայց նրանք իսկապէս շատ քիչ էին մասնակցել և գլխաւոր յանցաւորներն էին թուրք կանոնաւոր և անկանոն զինուորները ²⁾:

1) Michaud et Poujoulat, Correspondance d'Orient.

2) Lortet, La Syrie d'aujourd'hui.

Մարոնիները թէև բազմաթիւ են և պաշտպանուած բնական ամրութիւնների զառիւյայրերով, սակայն չհամարձակեցան բնաւ դիմադրել և խաղաղութիւնը վերահաստատուեց միմիայն երբ ֆրանսիական զօրագունդ ուղարկուեց: Վատ թաղուած դիակները և կոտորուածների արիւնազանգ տեղերը գրաւեցին դէպի իրենց վայրենի գազաններ՝ քաւթառ (once), բորենի, գայլ, որոնք տիրեցին երկրին և երկար ժամանակ՝ կոտորածից յետոյ էլ՝ առանց պահնորդների ճանապարհորդելը վտանգաւոր էր¹⁾:

Մարոնական երկրում հոգեւորականութիւնը չափազանց հզօր է: Հոգերի քառորդից աւելին պատկանում է եկեղեցուն: Առ նուազն երկու հարիւր վանք՝ սովորաբար զոյգ զոյգ շինուած, մինը արանց միւսը կանանց համար, ցրուած են լիբանանի հովիտներում և շրջապատուած ընկուզենիներով և ուրիշ ստուերախիտ ծառերով, կանգնած բերրի դաշտերի և այգիների դարատափների գլխին: Քահանաները ամուսնացած են, բայց այրիանալիս չեն կարող նորից ամուսնանալ, ընտրուած են վանականների ձեռքով ինչպէս և եպիսկոպոսները, որոնք իրենց կարգին ընտրում են պատրիարքին կամ Բարաիէն միայն թէ անհրաժեշտ է որ պապն էլ իւր հաւանութիւնը տայ: Պատարագն ասուում է հին ասորերէն (սիրիաք) լեզուով, որ անհասկանալի է թէ ժողովրդին և թէ քահանաներին: Շատ մարոնիներ սովորում են ֆրանսերէն և խօսում են այդ լեզուն դիւրութեամբ, բայց շատ հազիւ է պատահում որ նրա գրականութիւնն էլ ուսումնասիրեն: Նրանց փառասիրութիւնը բաւականանում է սովորաբար՝ թարգման կամ գրագիր դառնալով: Վաճառականութեամբ պարապողները մեծ մասամբ ձեռնարկող ոգի չունին և զբաղւում են միայն մանրավաճառութեամբ: Ժողովրդի մեծ մասը մինչև այսօր էլ զբաղւում է ժառանգական նախնական ձեռքով այգիների, արտերի և մրգատանների մշակութեամբ. սրանք էլ նախաձեռնութիւնից զուրկ են: Օտար, մեծ մասամբ յոյն արհեստաւորներ շինում և զար-

1) Van Lennep, Bible Lands.

գտնուում են նրանց շինուածքները, իսկ Մարոնիի շինածը լինում է թանձր ու խոշոր և անշնորհ: Նրա զգեստը այնչափ վայելուչ չէ որչափ 'Հարեանների' արաբների և գրուզներինը ¹⁾: Սակայն միջնագարեան մարոնական արուեստը թողել է մի քանի շինութիւններ ինքնուրոյն ոճով, զարգարուած գամկանկարներով (Փրէսք): Զուկ Միքայիլի մարոնի ոստայնանկները գործում են մետաքսի գեղեցիկ օթոցների, իսկ երկրի ոսկերիչները, որ պաշպանել են փիւնիկեցիների և յոյների ոսկերչական եղանակները, պատրաստում են շատ գնահատուած թանկագին զարդեր, գեղարուեստական մեծ ճաշակով: ²⁾

Ուրիշ միացեալ—կաթողիկներ բնակւում են անապատի սահմաններում, Դամասկոսից հարաւ և արեւմուտք, սրանք զուտ արաբական ծագումից են: Քրիստոնէական թուականութիւնից շատ առաջ գաղթելով Եմենից և ստուարացած Հեջազից և Նեջդից գաղութներով այս «Արաբ Արաբները» ինչպէս որ իրենք իրենց անուանում են իրենց անարատ ծագումը ցոյց տալու համար, քրիստոնեայ դարձան չորրորդ դարի վերջերում և նոր կրօնի պատճառով արթանացան «յոյն» անուանը: Արաբական տիրապետութիւնից յետոյ՝ եղան որ պաշպանեցին իրենց կրօնը, բայց օրթոդոքսների տիրապետութիւնը սկսաւ ծանրանալ նրանց վերայ: Ուստի և անկախութեան սիրուն համար՝ կապուեցին նրանք մի հեռաւոր տիրոջ՝ պապի հետ, որ թող տուեց նրանց ունենալ իրենց սեպհական նուիրապետութիւնը և ծխականատարութեան մէջ յունական լեզուն փոխանակել արաբականով: Նրանց տալիս են «միացեալ յոյն» անունը թէև նրանք հելլենների հետ կապուած չեն ոչ ծագումով, ոչ կրօնով: Նրանք կոչւում են նաև Մելքեաններ (Մելքիդ), այնէ՝ «արքայականներ»: Նրանց հոգեւոր գլուխը նստում է Դամասկոսում և կրում է պատրիարք Անտիօքի, Ալեքսանդրիայի և Երուսաղէմի տիտղոսը: Ասիայի բոլոր քրիստոնիաներից՝ յոյներից և լատիններից՝ աւելի յարգուած են մելքեան արաբները: Նրանց քաջա-

1) G. Palgrave, Essage en Eastern Quistions.

2) G. Rey, ձեռագիր:

սրտութիւնը ամեն փորձից բարձր է, նրանց բնական խելացիութիւնը զարգացած է կրթութեամբ, նրանք հիմնադրի կերպով հմուտ են իրենց լեզուին: Մինչև անգամ նրանցից այնպիսիները, որ չեն ուսումնասիրել գրականութիւնը, խօսում են վայելուչ և մաքուր արաբերէն: Լի իրաւացի անձնափստահութեամբ՝ նրանք յետ չեն ընկրկում ոչ մի ձեռնարկութիւնից և զարմանալի է թէ ի՞նչ մեծ մասնակցութիւն ունի այս փոքրիկ ժողովուրդը, որ անասարակոյս 100 000 հոգու չէ հասնում, մեծամեծ գործառնութեանց մէջ¹⁾:

Հրէաները օտարականներ են իրենց նախահայրերի երկրում, որը սակայն իրենց հայրենիքն են համարում: Մի միայն Գաւաւ-կոսում ունին նրանք մի հասարակութիւն, որ թւում է սերտած լինել ուղղակի նախնական գաղթականութիւնից: Վեց միլիոն եւրոպեցուց հազիւ թէ 40 000-ը, այնէ մօտ մի հարիւր յիսուներորդը ամբողջ ազգութեան բնակում են իրենց նախնական հայրենիքում: Լեհաստանն ու Գալիցիան են դարձել այժմեան յուզայականութեան կեդրոնաւայրը: Մի ժամանակ Պալեստինի հրէաները բոլորն էլ Մօգրաբիններ և Սպանիօլներ էին, սերտած Հաւատաքննութեան ձեռքով Սպանիայից արտաքսուած հրէաներից: Սրանք անուանւում են Սեֆարդիմ կամ «Գրքի մարդիկ»: Պալեստինում ապրում են նաև մի քանի կարայիտ: Բայց այս դարի կիսից իվեր հրէայ գաղթականները բաղմութեամբ գիմում են դէպի «Աւետեաց երկիրը» և այս գաղթականները գրեթէ ամբողջովին պատկանում են մի ուրիշ՝ այնէ՝ Աշկինազիմ կամ արեւելեան եւրոպայի հրէաների խմբին: Արդէն 1840 թուականներին մօտ հարիւր հօգի էին հաշւում այն հրէաների թիւը, որոնք զգալով մահի մերձենալը թողնում էին Սուսստանը և գնում Պալեստին այն տեղ հանգչելու համար: Այն ժամանակ ընդհանուր հաւատալիք էր, որ դատաստանի օրը «Սուրբ երկրում» թաղուած մեռեալները իսկոյն են յարութիւն առնելու, մինչդեռ միւսները հարկադրուած են լինելու խլուրդի նման ստորերկրեայ ճանապարհ բանալ մինչև սուրբ տեղերը, ուր աստուածային ձայնը կ'յարուցա-

1) G. Palgrave, յիշուած:

նէ նրանց¹⁾։ Թալմուտական աւանգութեան համաձայն, որ ընդունել են գերմանական, լեհական, ռուսական և ռումանական հրէաները, Սափէգ'ումն է հաստատելու Մեսսիան գաճը իւր գալըտեանը, և այս է սլաւոնաւոր, որ Պալեստինի եբրայական գրիխաւոր գաղութը խմբուել է այդ նախկին հրաքի ստորոտում²⁾։ Տիբերիադ'ումն էլ, ուր ծնուելու է Մեսսիան, հաստատուել են բաղմաթիւ գաղութներ, որոնք միշտ իրենց ճրագները լուցեալ են սլահում։ Նոյնպէս հաղարաւորներ խմբուել են Երուսաղէմի տաճարի շուրջը։ Արեւելեան Եւրոպայի հրէաների նորագոյն կրած հալածանքները արագացրին դալթականութեան շարժումը գէպի Յուդայաստան և բաղմաթիւ երկրագործական գաղութներ հաստատուեցան այդ երկրում, մասնաւորապէս Կարմէլի ստորոտում, Էսդրէլոնի գաշտում։ Անգլիացի մարգասէրները ջանացին ձեռք բերել եբրայեցի գաղթականների համար Գալազի սլաւոնական հողերը Անգլո-Յորդանանում³⁾։ Այս ձեռնարկութեանց սկզբնաւորութիւնը ողբալի էր. սոյլ, աղքատութիւնը, հիւանդութիւնները կոտորեցին թշուառ փախստականներին։ Շատ տեղերում ստիպուեցան նրանք ցրուել, որ մուրացկանութեամբ կարողանան իրենց թշուառ կեանքը ապրեցնել։ Այս թշուառներից մի քանի խումբ էլ հարկադրուեցան թուրք կառավարութեան հրամանով նաւ նստել և վերադառնալ՝ որտեղից որ եկել էին։ Այսուամենայնիւ՝ այսպիսի խմբովին ներգաղթականութեան հետեւանքն է լինելու անշուշտ՝ եբրայական տարրի աճելը Պալեստինում։ Սեֆարդիմները, որ երբեմն դատաւարտուած էին սև փաթթոցներ կրելու գլխին, աչքի են ընկնում իրենց ազնիւ նիստ ու կացով, կերպարանքի գեղեցկութեամբ, բայց աշկինաղիմներից աւելի նախապաշարուած են, ոչ նոյնչափ գործունեայ, աւելի տգէտ, ուստի և դատաւարտուած

1) I. G. Kohl, Reisen in Süd — Russland. — տե՛ս նաև Voyages de Chardin.

2) De Vogüe, Revue Deu Mond's février 1875

3) Laurence Oliphant, The Land of Gilaad.

են հրէայ ազգութեան սինդքորը — պրոլետարիատը դառնալու։

Հին հրէաների երկիրը, որ պատերազմի դաշտ է դարձել Յիսուս — Քրիստոսի անուանը նուիրուած զանազան կրօնական դաւանութեանց միջև, որ աշխատում են տիրել նրա գերեզմանին, ունի ոչ միայն բազմաթիւ քարոզիչներ, զրոյից եկած, այլ և եւրոպացի երկրագործական գաղութներ։ Ամենահարուստը դրանցից են բողոքական Շուաբներին՝ հաստատուած Եաֆայի մօտ և Խաիֆայ՝ ում, Կարմելտարի ստորոտում։ Այս գաղութները պատկանում են «տաճարականների» աղանդին և սպասում են Մեսսիայի գալստեանը և ցանկանում են առաջինը լինել նորա կոչելուն պատասխանող Դատաստանի օրը։ Շատ տարութեամբներից յետոյ նրանց հաստատութիւնները, որ կամաւոր նպաստ են ստանում մայր — հայրենիքից, բաւական կարեւորութիւն ստացան իբրեւ արհեստաշահ և առևտրական կեդրոններ, որտեղից ճանապարհները տարածւում են դէպի չորս — բոլորը։ Կամաց կամաց այդ գաղութները կորցնում են կրօնական բնակչութիւնը և դառնում են տնտեսական ձեռնարկութիւն և բազմաթիւ գաղթականների խմբեր արդէն իրենց անձնական հաշուին են աշխատում։ Հասարակութիւններից դուրս։ Յոյն և եւրոպացի ձեռնարկողներ ձեռք են բերում կառավարութիւնից ընդարձակ հողեր ամեննաբերրի գաւառներում։ Միայն մի վաճառական իբրեւ բաժին ստացաւ Էսդրէլոնի դաշտի կէտը, քսան գիւղով։ Հողերի սեպհականութիւնը ձեռքից ձեռք է անցնում ի մեծ վնաս փէլլահների։ Հին հասարակութիւնները, որոնց մէջ իւրաքանչիւր ոք առնուազն անհերքելի իրաւունք ունէր հողատիրութեան և ուր շարունակ անկարողի կամ անգամաւոյժի հողը՝ մշակուած էր գիւղացիներից¹⁾, այլ ևս գոյութիւն չունին։ Աղքատութիւնը աճում է գիւղերում, շէները դատարկւում են բնիկ բնակիչներից, մինչդեռ քաղաքները լցւում են օտարական գաղթականներով։ Սովը յաճախակի աւերում է երկիրը։ Քանի քանի անգամ գիւղացիները հաց չունենալով ստիպուած են եղել իբրեւ կերակուր

1) Conder, Tent-work in Palestine.

գործածել կուտատուկի (maure) չատիկները, եփուած կաթի կամ ձիթի մէջ 1):

1) Ասորիքի և Պալեստինի բնակիչները, դասաւորուած ըստ կրօնների,

մ օ տ ա լ ո Ր ա կ ա ն թ ո լ ե Ր ո վ:

Մուսուլման	Սիւննի	650 000
	Մետուալի	40 000
Դրուշ		120 000
Անսարի		150 000
Յոյն օրթոդոքս		100 000
	Մարոն	200 000
Հատին կաթոլիկ	Մեկքեան	80 000
	Միացեալ Առորիններ և այլք	40 000
Հայ		20 000
Հրէայ և Սամարացի		40 000
Բողոքական և այլ և այլ ազանդներ		10 000

ՄԻԼԵՐԱՆ.

(Կը շարունակուի.)